«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ **ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

Հետազոտող ուսուցիչ՝ Գրիգորյան Մանուշակ Սիմոնի

Մեծամորի թիվ 1 հիմն. դպրոց

Մենթոր ուսուցիչ՝ Անտոնյան Արմինե

ԱՐՄԱՎԻՐ- 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....
3

Գլուխ.1 ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

1.1 Ինքնուրույնությունն ու նախաձեռնությունը՝որպես սովորողի առաջադիմության ու մոտիվացիայի բարձրացման միջոց.....5

1.2 Սովորողի ստեղծագործական ունակությունների զարգացման եղանակները տարրական դպրոցում.....10

Եզրակացություններ.....1
5

Առաջարկություններ.....1
6

Օգտագործված գրականության ցանկ.....17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Այն ուսուցիչը, որը կարողանում է իր սաներին օժտել աշխատանքի մեջ ուրախություն գտնելու ընդունակությամբ, արժանի է դափնեպսակի» ***Էլբերթ Հաբարդ***

Վերջին տարիներին մեր երկրում ակտիվ կերպով իրականացվում են կրթական բարեփոխումներ: Դա հիմնականում պայմանավորված է ժամանակի նոր մարտահրավերներով, որոնց համար հիմք է ծառայում տեխնոլոգիաների սրընթաց զարգացումն ու կրթական համակարգում այդ տեխնոլոգիաների ներդրումը: Որպեսզի բարեփոխումները լինեն արդյունավետ, դրանք պետք է բխեն կրթության անմիջական մասնակիցների շահերից և նպատակ ունենան սովորողներին հասանելի դարձնեն գիտելիքների ու կարողողունակությունների մի ամբողջական համակարգ: Հենց սա է ՀՀ-ում նոր որակի կրթություն ունենալու նպատակը:

Նորովի մատուցելու և դասավանդման արդյունավետությունը բարձրացնելու ձգտումը կրթական համակարգի շահագրգիռ կողմերին դրդել է նոր սկզբունքներ և մարտավարություններ մշակել, վորարժևորել կրթության առաջնային շահակիցների դերը, ապահովել վերջիններիս համաչափ ու համակողմանի զարգացումը, ինչն անչափ կարևոր է մերօրյա իրականությունում: Նոր կրթական պահանջների հիմքում դրված է այն առանցքային գաղափարը, որ դասավանդելն ու սովորելը պետք է հավասարապես փոխկապակցված լինեն, միայն այդ դեպքում սովորելը արդյունավետ դասավանդման արդյունք կհամարվի:

Այս համատեքստում տարրական դպրոցում դասավանդող ուսուցիչը կարող է բախվել մի շարք խնդիրների՝ պայմանավորված սովորողների տարիքային առանձնահատկություններով, ուստի ուսումնական առարկայի համար սահմանված կրթական չափորոշչային վերջնարդյունքին հասնելու համար անհրաժեշտ է, որ ուսուցիչը ևս անպայման համապատասխանի նոր մարտահրավերներով պայմանավորված պահանջներին՝լինի ստեղծագործ, նորարար, ունենա մարդասիրական մղումներ, մասնագիտական ու մարդկային բարձր որակներ: Ուսուցիչը պետք է հասկանա, որ իր անմիջական ներգործությունն ու ուղղորդումը

առանցքային նշանակություն ունեն կրտսեր դպրոցական տարիքի սովորողների բնականոն զարգացման, արժեհամակարգի ձևավորման ու ուսումնառության ընթացքում առաջադիմություն ունենալու առումով:

Արդյունքը կլինի այն, որ կունենանք ինքնուրույն մտածող ու գործող, կրթության և կյանքի այլ ասպեկտներում նախաձեռնող, կյանքի իրողություններին ստեղծագործաբար մոտեցող սերունդ: Այս ամենին հասնելու համար կարևոր ենք համարում նաև ինտերակտիվ ուսուցման ներդրումը, ինչը, վստահաբար, սովորողներին հնարավորություն կտա դուրս գալ լսողի կարգավիճակից և դառնալ հետազոտող, փնտրող, հավաքագրող, ուսումնասիրող՝ ձեռք բերելով մի շարք կենսական նշանակության հմտություններ ու կարողություններ:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Թեմայի արդիականությունը պայմանավորված է նոր ժամանակի մարտահրավերներով սահմանված կրթական կարիքների բավարարմամբ և այդ համատեքստում սովորողի ու ուսուցչի կառուցողական համագործակցության անհրաժեշտությամբ՝ որպես ուսուցման որակի բարձրացման նախապայման:

Հետազոտության նպատակը: Ցույց տալ ուսուցչի և սովորողի արդյունավետ փոխգործակցության դերը վերջինիս մոտ մի շարք կենսական նշանակության գիտելիքների, կարողությունների ու հմտությունների զարգացման գործում:

Հետազոտության խնդիրը: Հետազոտության խնդիրն է կարևորել աշակերտակենտրոն ուսուցման դերը կրթական համակարգում՝ որպես նախաձեռնության, ինքնուրույնության և ստեղծագործականության զարգացման հիմք:

ԳԼՈՒԽ 1 ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

1.1 Ինքնուրույնությունն ու նախաձեռնությունը՝որպես սովորողի առաջադիմության ու մոտիվացիայի բարձրացման միջոց

Այսօրվա կրթական համակարգը պահանջում է , որ ուսուցիչներն ունենան այնպիսի մասնագիտական պատրաստվածություն, ինչն իրենց թույլ կտա արդյունավետ կազմակերպել սովորողների ուսումնառությունը, հարստացնել ուսուցման և դաստիարակության մեթոդները, ավանդական մեթոդների կողքին լայնորեն կիրառել ժամանակակից փոխներգործուն մեթոդները՝ նպատակ ունենալով զարգացնել սովորողի մոտ մի շարք կարողունակություններ, որոնք առաջնային դեր ունեն այսօրվա աշխարում: Աշակերտակենտրոն ուսուցումը, որի հիմնական բաղադրիչներից են փոխգործուն մեթոդամանկավարժական հնարները, ունակ են փոխել սովորողների տրամադրվածությունը ուսումնական գործընթացի հանդեպ՝ հաճախակի նկատվող ձանձրույթն ու հոգնածությունը փոխարինելով ակտիվությամբ ու նախաձեռնությանմ: Ուսուցման այս համալիր համակարգն ունակ է սովորողի մոտ ձևավորել շփվելու, հաղորդակցվելու, համագործակցելու, երևակայելու, ապագան կանխատեսելու և պլանավորելու, սեփական կարծիք ձևավորելու և արտահայտելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու և որոշում կայացնելու կարողությունները: Ինքնուրույնության խթանման համար անհրաժեշտ է կարևորել համապատասխան մոտեցումներն ու սպասումները հատկապես կրտսեր դպրոցական տարիքում, քանի որ հենց կյանքի այս շրջափուլում է ձևավորվում սովորողների աշխարհընկալումն ու տեղի ունենում սոցիալականացման հիմնական գործընթացը:

Պետք է հաշվի առնել, որ բուն գիտելիքի հաղորդմանը զուգահեռ անչափ կարևոր է այդ գիտելիքի իրացումը գործնականում: Այստեղ կարևոր են տեսական գիտելիքների գործնական կիրառման հնարավորությունները սովորողների համար: Կարող ենք ասել, որ միայն տեսական գիտելիքը որևէ հիմնաքարային ազդեցություն չի կարող ունենալ սովորողի իմացական կարողություններն ամրապնտելու առումով, քանի որ գործնական պարապունքների բացակայության պարագայում, սովորողի մոտ ուսուցանվող նյութը կունենա մեխանիկական բնույթ:

Նախաձեռնությունը նորարարությունների հանգեցնող մտքերի ակունքն է: Պակաս կարևոր չէ ինքնուրույնությունը, որի համար անհրաժեշտ նախապայմաններ են հանդիսանում որոշման կայացումը, ներքին ազատությունը, պատասխանատվության գիտակցումը, կայացման ձգտումը, ինչին հնարավոր է հասնել գիտելիքի, մասնագիտության նախընտրության և պահանջարկի համապատասխանությամբ, արժեհամակարգի ձևավորմամբ, մատչելի տեղեկատվության ապահովմամբ և այլն: Ինքնուրույնության խթանման համար անհրաժեշտ է կարևորել համապատասխան մոտեցումներն ու սպասումները ինչպես տարիքային տարբեր փուլերում, այնպես էլ կրթական տարբեր աստիճաններում:

Ժամանակակից կրթությունը հիմնախնդիրներից է ստեղծագործ, անկախ գործող, նախաձեռնող ու նախագծող սերնդի ձևավորումը: Այս մարտահրավերով է պայմանավորված նաև ՀՀ կրթական համակարգում իրականացվող ներկայիս բարեփոխումներ գործընթացը: Հենց այս կարողությունների ձևավորմամբ է պայմանավորված մարդկության առաջընթացը, որն այսօր աննախադեպ կերպով շոշափելի է դարձել: Ուստի հատկապես տարրական դպրոցում ստեղծագործական անհատականություն ձևավորելու անհրաժեշտությունն օրախնդիր է:

Կրտսեր դպրոցականների ինքնուրույնության և նախաձեռնողական վարքագծի դրսևորումները դպրոցում կարելի է դիտարկել մի քանի տեսանկյունից: Եթե վերցնենք ուսուցչի ուղղակի ներգործությունը սովորողի ինքնուրույնության և նախաձեռնողականության գործունեության բարձրացման վրա, ապա հարկ է արձանագրել, որ դա մեծապես կախված է վերջինիս մանկավարժական ու անձնային որակներից: Իսկ ի՞նչ են իրենցից ենթադրում այդ որակները:

Ուսուցչի մասնագիտական որակներն են՝

- հանդուրժողականությունը, սեփական աշխատանքը ծրագրելու և կազմակերպելու, ուսուցման գործընթացն արդյունավետ իրականացնելու, մասնավորապես ավանդական և ժամանակակից մեթոդները զուգորդված օգտագործելու, անվտանգ ուսումնական, հոգեբանական և դաստիարակող միջավայր ստեղծելու կարողություն;
- նորը զգալու և ընկալելու կարողություն, գենդերային անկողմնակալություն;
- քննադատական մտածելակերպ, սեփական գործունեությունը մշտապես վերլուծելու, վերանայելու, ճշգրտելու և կատարելագործելու ցանկություն և կարողություն;
- սովորողի իրավունքների պաշտպանի, երեխային համաձևավորողի, ուսումնադաստիարակչական գործընթացը երեխայի համար հեշտացնողի

դերերը մասնագիտական բարձր որակով կատարելու ցանկություն և կարողություն;

- դպրոցի, դասարանի և նրանում կատարվող բոլոր իրադարձությունների և փոփոխությունների մասնակիցը լինելու պատրաստակամություն:
- կրթության ոլորտին և իր մասնագիտությանը վերաբերող հիմնախնդիրներին իրազեկ լինելու և դրանց լուծման ուղիների մասին սեփական կարծիք և ակտիվ մասնակցություն ունենալու գիտակցություն և կարողություն [1]:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ կրթության ցանկացած ոլորտում անհնար է որևէ բարեփոխում իրականացնել առանց ուսուցչի մասնակցության և աջակցության: Նա պետք է գիտակցի բարեփոխումների անհրաժեշտությունը և դրանցում իր մասնակցության կարևորությունը, ունենա մասնագիտական անհրաժեշտ պատրաստվածություն և բարոյական որակներ: Կրթության որակի բարձրացման, սովորողի մեջ առաջնային կարողությունների ձևավորման համար կարևոր է նաև կրթության բովանդակությունը: Կրթության բովանդակությունը նորմատիվային փաստաթղթերի, ուսումնական նյութերի ամբողջություն է, որի մեջ ամփոփված է ի՞նչ ենք սովորեցնում հարցը: Այդ հարցը հատկապես էական է դառնում արագ փոփոխվող աշխարհում, քանի որ ժամանակի պահանջներին չհամապատասխանող բովանդակությունը չի կարող մոտիվացնել այսօրվա սովորողին[2]:

Հոգեբանական տեսանկյունից կրտսեր դպրոցական տարիքը կարելի է համարել բարենպաստ սովորողի մոտ ստեղծարարության, նախաձեռնության զարգացման, սեփական մտքերն ու հետաքրքրությունները դասի ընթացք բերելու համար, քանի որ տարիքային այս կատեգորիայի մոտ ընգծված կերպով է արտահայտված աշխարհը ճանաչելու, ինքնուրույն գործելու,մեծերի ներգործությունը թուլացնելու ցանկությունը: Այնուամենայնիվ, աներկբա է, որ այս գործընթացի վրա էականորեն ազդում է երեխայի հարաբերությունների համակարգը ծնողների, ուսուցիչների, հասակակիցների հետ, ուստի վերջինիս ցանկությունների ու հետաքրքրությունների սահմանափակումը ուսուցչի կողմից կարելի է դիտարկել մանկավարժական սխալ մոտեցում: Շատ կարևոր է ուսուցման գործընթացում ուսուցչի կողմից ստեղծված բարոյահոգեբանական բարենպաստ

---

[1] Ա. Թոփուզյան, Մանկավարժական միտք, 2012, «Ժամանակակից ուսուցչին ներկայացվող պահանջները», էջ 13:

[2] https://www.moj.am/storage/uploads/00.Ardir_6.pdf Ուսուցիչների մասնագիտական զարգացման և կրթության բովանդակության գնահատումը՝ ՀՀ հանրակրթության բարեփոխումների համատեքստում, Երևան 2013, էջ 13:

միջավայրը: Առանց այս հանգամանքի, ուսուցման ընթացքը հնարավոր չէ անցնցում կառավարել, ցույց տալ սովորողներին իրենց դերերն ու պարտավորությունները:

Որպեսզի մանկավարժները դասարանում կարողանան ստեղծել հոգեբանական բարենպաստ մթնոլորտ, նրանք պետք է իմանան դրանց բնութագրիչները: Դրանցից են.

1. Դասարանում երեխաների միջև առկա են աշխույժ, բարիդրացիական փոխհարաբերություններ, լավտեսական տրամադրություն, փոխհամագործակցություն: Նրանք հաճույքով են կատարում խմբային աշխատանքներ: Հարաբերություններում գերակայում է խրախուսումը, իսկ քննադատությունն իրականացվում է նուրբ տոնով:
2. Դասարանում իշխում է հարգանքի մթնոլորտ: Այստեղ մշտապես բոլորն իրենց պաշտպանված են զգում:
3. Դասարանում բարձր են գնահատվում անձի այնպիսի որակները, ինչպիսիք են՝ պատասխանատվությունը, աշխատասիրությունը, արդարամտությունը, անշահախնդրությունը և այլն:
4. Սովորողներն ակտիվ են, աշխույժ: Նրանք արագ արձագանքում են, եթե պետք է ինչ-որ օգտավետ աշխատանք կատարել[3]:

Ստացվում է, որ ուսուցչի և սովորողների միջև արդյունավետ փոխգործակցության, եկուստեք ցուցաբերած սոցիալական ակտիվության, հարգանքի արդյունքում դասը կարող է միմյան շահել, քանի որ բարոյահոգեբանական կայուն մթնոլորտում հնարավոր է հասնել նոր կարողությունների ու հմտությունների ամրակայմանը, որոնք սովորողը ձեռք է բերում ուսումնառության ընթացքում:

Կրտսեր դպրոցականի մոտ ինքնուրույնության ու նախաձեռնության զարգացման համար կարևոր է վերջինիս բնականոն ու կառուցողական սոցիալականացումը: Վերջինս պետք է փորձի ավելի շատ ցուցաբերել սոցիալական ակտիվություն: Սոցիալական ակտիվություն հասկացությունը արտացոլում է անձի գործելու բնույթը սոցիալական խմբում, հասարակության մեջ: Այդ ակտիվությունը կապված է այն բանի հետ, երբ անձի հետաքրքրությունները դառնում են ակտիվ գործելու պատճառ, երբ նրա աշխարհաճանաչման ձգտումներն ու նպատակադրումները ուղղվում են իրականության վերափոխմանը: Անձի ակտիվության հիմնական պատճառն այն է, որ հակասություններ են ստեղծվում նրա

[3] http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Naxashavix/2013(4).pdf Գիտամեթոդական հանդես, «Նախաշավիղ», Երևան, 2013, էջ 10:

կենսապայմանների ու օբյեկտիվ պահանջմունքների միջև, և նա ակտիվանում է այդ անհամապատասխանությունը հաղթահարելու համար[4]:

Հատկապես կրտսեր դպրոցական տարիքում առաջադիմություն ունենալու և հաղթանակներ գրանցելու համար կարևոր է ուսուցչի կողմից սովորողին խրախուսելը, հետաքրքրասիրությունների ու հոգող հարցերի բավարարումը, նրանց տարբեր գործողություններում ներգրավելը, համագործակցային հարաբերություններ հաստատելը: Նմանօրինակ գործելաոճը հենց այն ուղին է, որով կարելի է շահել սովորողի վստահությունը, բերել նրան կառավարելի դաշտ: Պատվոգրեր, շնորհակալագրեր, բարձր գնահատականներ. նման խրախուսումները հաճախ ստիպում են սովորողին վերանայել սեփական վարքը, վերարժևորել իր ուսումնառության գործընթացն ու ավելի մոտիվացված առաջ գնալ: Ուսուցիչը պետք է անպայման իրակզեկ լինի օրենքով սահմանված իր պարտավորությունների և անվերապահորեն կատարի դրանք, որոնցից այս համատեքստում կառանձնացնենք հետևյալը՝ «Ուսուցիչը պետք է սովորողների մեջ զարգացնի ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակություններ»[5]:

Այսպիսով, առաջնահերթություն համարելով սովորողի ինքնութույնության ու նախաձեռնության զարգացումը՝ կարծում ենք, որ սովորողները պետք է դառնան ուսումնական գործընթացի գործընկերային կողմ՝ իրենց դերերով, պատասխանատվությամբ, նորորանրությամբ: Մանկավարժական այս մոտեցումը ժամանակի ընթացքում հնարավորություն կտա լուծել մեր առջև դրած խնդիրը, այն է՝ սովորողի մոտ զարգացնել ինքնուրույն ու նախաձեռնություն:

---

[4] http://ijevanlib.ysu.am/wp-content/uploads/2017/12/Arzumanyan.pdf Ս. Արզումանյան, Հոգեբանություն, Երևան, 2003, էջ 65:

[5] https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908 ՀՀ հանրակրթության մասին օրենք: Հոդված 27, կետ 10:

1.2 Սովորողի ստեղծագործական ունակությունների զարգացման եղանակները տարրական դպրոցում

Ուսումնական գործընթացքում, ի թիվս մի շարք խնդիրների, հատկապես կարևորվում է ստեղծագործական ունակությունների ձևավորումն ու զարգացումը հանրակրթական դպրոցի տարրական օղակում: Գերխնդիր է դարձել այն հարցադրումը, թե ի՞նչ եղանակներով ու մեթոդներով է հնարավոր զարգացնել սովորողի ստեղծագործական ունակությունները, որն ինքնին ենթադրում է երևակայելու, հետաքրքրվելու, նորարար ու ինքնատիպ գործելու կարողությունների ամբողջություն:

Կարծում ենք՝ ակտիվ ուսուցման մեթոդը ամենաարդիականն է: ժամանակակից ուսուցման մեթոդներն ու եղանակները, ՏՀՏ գործիքների ներդրմամբ իրականացված դասերը, ոչ ստանդարտ դասերը կարող են հանդիսանալ այն գրավականը, որը սովորողի մոտ կմեծացնի հետաքրքրությունը առարկայի հանդեպ: Այս մոտեցումը ուսումնական գործընթացին թույլ կտա առարկաների ուսումնասիրությունը դարձնել սովորողին հասանելի, դրանց շրջանակներում բացահայտել աշխարհը, մարդկանց, երևույթները նորովի, ուստի սովորողը հնարավորություն կունենա կոնկրետ առարկայի ուսումնասիրության ընթացքում զարգացնել նաև ստեղծագործական ունակություններ:

Նոր թեմայի ուսուցումը որևէ հետաքրքիր մեթոդի կիրառությամբ ուսուցման ընթացքը կդարձնի շարժուն ակտիվ՝ հնարավորություն տալով կրտսեր դպրոցականին ի ցույց դնել իր մտքերը, հետաքրքրություններն ու գործնականում ինքնուրույն գործել: Սա բավականին կարևոր է այս տարիքի սովորողների զարգացման տեսանկյունից:

Յուրաքանչյուր մարդու մեջ կա անբացատրելի հետաքրքրություն և դրական վերաբերմունք դեպի անսովորը, ուստի փոխգործուն մեթոդների կիրառությունը, կարծում ենք, բավականին արդյունավետ կարող է ներգործել դասի ընթացքի վրա՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նման մեթոդները թույլ են տալիս, որ սովորողները սովորեն ստեղծագործելով:

Փոխգործուն մեթոդամանկավարժական հնարներից տարրական դպրոցում կարելի է կիրառել.

- ✓ Մտագրոհ
- ✓ Մ-աձև աղյուսակ

- ✓ Մտքերի քարտեզագրում
- ✓ Շրջագայություն անցած թեմաների էջերով
- ✓ ԳՈՒՍ և այլն

Նմանօրինակ հնարների կիրառումը սովորողի առաջ բացում է ստեղծագործ մոտեցումներ ցուցաբերելու լայն հնարավորություններ: Այս կերպ դասի փուլերը հստակ տարանջատվում են, լրացնում միմյանց, ինչն իր հերթին նպաստում է, որ դասարանը չկորցնի ակտիվությունը:

Փոխգործուն մեթոդների առանձնահատկություններն են.

- ➢ երեխայի իմացական գործընթացների կազմակերպումը,
- ➢ հետաքրքրությունների բացահայտումը,
- ➢ համագործակցային կարողությունների զարգացումը,
- ➢ անհատական առանձնահատկությունների բացահայտումը,
- ➢ հաղորդակցական ունակությունների ձևավորումը,
- ➢ տրամաբանական մտածողության զարգացումը,
- ➢ ինքնուրույնության խրախուսումը,
- ➢ վերլուծական կարողությունների ձևավորումը:

Փոխներգործուն մոդելն անպայման ենթադրում է ուսուցման գործընթացում ստեղծագործական առաջադրանքների առկայություն, ինչպես նաև պարտադիր շփում աշակերտ-ուսուցիչ համակարգում: Փոխներգործուն մոդելը նպատակ ունի ձևավորել ուսուցման այնպիսի պայմաններ, որոնցում բոլոր սովորողներն ակտիվորեն փոխգործակցում են: Այս մոդելը ենթադրում է նաև կենսական իրավիճակների մոդելավորում, դերային խաղերի կիրառում, տեղեկատվական հոսքերի ներթափանցում սովորողների գիտակցության մեջ, որոնց շնորհիվ իրականանում է սովորողների ակտիվ գործունեությունը: Այս պատճառով էլ դասի կառուցվածքի մեջ ներառվում են փոխներգործուն մոդելի միայն առանձին տարրեր՝ փոխներգործուն տեխնոլոգիաներ, այն է՝ կոնկրետ ձևեր ու մեթոդներ, որոնք նպաստում են դասն առավել հագեցած, կենդանի և հետաքրքիր դարձնելուն: Փոխներգործուն ուսուցման գլխավոր նպատակը աշակերտի անձի ամբողջական զարգացումն է, իսկ վերջինիս հիմնական միջոցը, որը բացահայտում է անձի ընդունակությունները, իմացական և մտավոր ինքնուրույն գործունեությունն է[6]:

---

[6]https://vsu.am/grqer/2018/bprak/tonoyanparancem.pdf Փ. Տոնոյան, «Փոխներգործուն մեթոդների կիրառումը Փոխներգործուն մեթոդների կիրառումը տարրական դասարաններում մաթեմատիկայի տարրական դասարաններում մաթեմատիկայի ուսուցման գործընթացում», էջ 261:

Այստեղից կարելի է եզրահանգել, որ ուսուցչի գլխավոր խնդիրը դառնում է դասագործընթացում այնպիսի գործունեության ապահովումը, որը կարող է իրականանալ միայն ժամանակակից փոխգործուն տեխնոլոգիաների և մեթոդների կիրառմամբ, ինչը թույլ կտա սովորողի համար ապահովել ստեղծագործականությունը զարգացնելու նախապայմաններ:

Ստեղծագործական ունակությունների զարգացման, ինքնուրույն խոսքի ձևավորմանը խթանող մի հնար է «Գուշակություն» հնարը: Սովորողների հետաքրքրությունը խթանելու նպատակով կարելի է նյութի հիմնական կարևոր հասկացությունները կամ վերնագիրը թերթիկների վրա գրել, կտրատել առանձին բառերի և պահել: Դասը սկսելուց առաջ առաջարկել սովորողներին գտնել դրանք և համադրելով ստանալ վերնագիրը կամ գլխավոր միտքը: Կարելի է առաջարկել նաև ստացածը կարդալով գուշակել՝ ինչի մասին է դասը, կարծիքները լսել և առաջարկել ուսումնասիրել բուն դասանյութն ու ընդհանրություններ կամ տարբերություններ գտնել գուշակածի ու դասանյութի միջև[7]:

Օրինակ՝ տարրական դասարաններում առակի ուսուցման շրջանակներում դասը կարելի է վարել փոխգործուն մեթոդներով: Կարելի է օգտագործել հարցադրումների մեթոդը: Ուսուցիչը նախօրոք կկազմի հարցաթերթեր ու կբաժանի սովորողներին: Դրանք կարող են ունենալ հոտևյալ բովանդակությունը.

- Ի՞նչ առակագիրներ և առակներ գիտեք:
- Քա՞նի մասից է բաղկացած առակը
- Ի՞նչ եք հասկանում՝ առակի խրատական մաս ասելով:

Սովորողները կաշխատեն զույգերով և կներկայացնեն նախորդ դասերի ընթացքում առակների մասին իմացած տեղեկությունները: Ապա մտագրոհի միջոցով գրատախտակին կգրեն բանալի բառեր:

Կարելի է նաև հանձնարարել, որ սովորողները, իրար շարունակելով կարդան առակը, որից հետո երկսյուն աղյուսակում մեկ բառով հատկանշավորեն առակի հերոսներին՝ զուգահեռ բանավոր կարծիք հայտնելով վերջիններիս արարքների մասին: Այսպես սովորողները կստանան հնարավորություն ստեղծագորական մոտենալու դասի ընթացքին, քանի որ յուրաքանչյուրը կարտահայտի իր կարծիքը: Այստեղ կցանկանանք կարևորել նաև խոսքային կարողությունների զարգացումն ու բառային պաշարի հարստացումը:

[7] https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf Ուսուցման արդյունավետ հնարներ,Երևան, 2020, էջ 23:

ԱՂՎԵՍ	ԱԳՌԱՎ

Հետաքրքիր տարբերակ է նաև քարտային աշխատանքը: Սովորողները կստանան անհատական քարտային առաջադրանքներ.

Շարունակիր միտքը, գրիր և ես 2-3 նախադասություն:

- Ի՞նչ կլինի, եթե...
- Պատկերացրու, որ...
- Դու ինչպե՞ս կվարվեիր, եթե...
- Երբևէ մտածե՞լ ես, որ...

Այս ամենին զուգահեռ ուսուցիչը կարող է նաև ամրապնդել քերականական գիտելիքները, ասենք աղյուսակի օգնությամբ: Առակից գտիր համապատասխան բառերը և լրացրու աղյուսակում:

Գոյական	Ածական	Բայ

Հաջորդիվ ուսուցիչը հանձնարարում է դերերով ընթերցել առակը՝ ուշադրություն դարձնելով արտահայտչամիջոցների վրա: Ընթերցելուց հետո ուսուցչի հանձնարարությամբ դասարանը բաժանվում է խմբերի, որոնք պետք է բառարանից գտնեն անծանոթ բառերի բացատրությունները: Խմբերը ներկայացնում են իրենց աշխատանքը՝ բառերի բացատրությունները գրելով գրատախտակին: Անդրադարձ է կատարվում թե՛ բառի իմաստին, թե՛ ուղղագրությանը, թե բառը վերլուծվում է խոսքիմաստային առումով:

Արդյունավետ եղանակ է նաև Վեննի դիագրամի կիրառությունը, որը նույնպես կարող է ակտիվացնել սովորողի ստեղծագործական ունակությունները:



1. Ո՞րն է առակի և հեքիաթի տարբերությունը:

Այսպիսով, փոխգործուն մեթոդների արդյունավետությունը սովորողների ստեղծագործական ունակությունների զարգացման վրա փորձեցինք հիմնավորել առակների ուսուցման վերը թվարկած օրինակների միջոցով: Իհարկե, ավանդական եղանակով նույնպես կարելի է վարել դասը, զարգացնել ստեղծագործական ունակությունները, ինքնուրույնությունը, այնուամենայնիվ, հաշվի առնելով ժամանակակից սովորողների պահանջմունքները, կարծում ենք, որ ավելի շատ պետք է լսելի լինի հենց նրանց խոսքը, իրենք պետք է բացահայտեն այս կամ այն հմտությունը, կարողությունն ու գիտելիքը, անհատական կամ խմբային եղանակով պետք է հետազոտեն, պրպտեն, տեղեկություններ հավաքեն դասի թեմայի շուրջ, ներկայացնեն, բանակցեն ու ինքնադրսևորվեն:

Այսպես մենք դեռ տարրական դասարաններից ենք խրախուսում սովորողի ինքնուրույնությունը, տալիս ենք նրան աշխարհը ճանաչել իրեն ցանկալի եղանակով:

Կարող ենք վստահաբար պնդել, որ ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար: Բայց այդ ամենը չեն բացառում նաև ավանդական մոտեցումների օգտագործումը: Հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար:

Հավելենք նաև, որ սույն հետազոտական աշխատանքը իր դրական ազդեցությունը կունենա մեր՝ ուսուցիչներիս մասնագիտական որակների բարձրացման համար ու անպայման կօգնի մեզ հետագա մանկավարժական գործունեության ընթացքում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, սույն թեմայի ուսումնասիրության արդյունքում կատարեցինք մի շարք եզրահանգումները, որոնք կներկայացնենք ստորև:

Տարրական դասարանների ուսուցիչը ուսումնադաստիարակչական գործունեության բնագավառում պետք է.

- ✓ Իրականացնի ծրագրային առարկաների ուսուցման գործընթացը՝ համապատասխան կրթական ծրագրին ու չափորոշիչներին,
- ✓ Ուսուցման շրջանակներում կիրառի ուսուցման ժամանակակից եղանակները, մեթոդները և միջոցները,
- ✓ Անհատական մոտեցմամբ սովորողների մեջ արթնացնի սեր ու հետաքրքրություն սովորելու նկատմամբ,
- ✓ Առարկայի ուսուցմանը զուգընթաց սովորողների մեջ ձևավորի հոգեկան, բարոյական արժեքներ, ինքնուրույնություն, նախաձեռնություն, ստեղծագործական ունակություններ,
- ✓ Ոգևորի սովորողի նախաձեռնողական քայլերն ու ստեղծագործական ունակությունները, առարկայի ուսուցման շրջանակներում զարգացնի դրանք,
- ✓ Խրախուսի, ոգևորի սովորողին,
- ✓ Ակտիվ ուսուցման շնորհիվ բարձրացնի սովորողների աշխատունակությունը;
- ✓ Սիրի իր աշխատանքն ու սաներին:

ԱՌԱՁԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ✓ Սովորողների մոտ առարկայի հանդեպ հետաքրքրության ու մոտիվացիայի բարձրացման համար կարելի է հաճախակի ներգրավել նրանց ստեղծագործական բնույթի աշխատանքների կատարման մեջ,
- ✓ Ուսուցման որակը բարձրացնելու նպատակով կարելի է արդիականացնել դասարանի կահավորանքը,
- ✓ Կիրառել փոխգործուն մեթոդներ ավելի հաճախ, որպեսզի սովորողը լինի մոտիվացված,
- ✓ Հարկավոր չէ ծանրաբեռնոլ կրտսեր դպրոցականներին տնային առաջադրանքներով, այդպես նրանք կարող են հիասթափվել,
- ✓ Հաճախ դեմել դերային խաղային տեխնոլոգիաների օգնությանը, կրտսեր դպրոցականի համար դա անչափ հետաքրքիր կլինի:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա. Թոփուզյան, Մանկավարժական միտք, 2012, «Ժամանակակից ուսուցչին ներկայացվող պահանջները»:
2. https://www.moj.am/storage/uploads/00.Ardir_6.pdf Ուսուցիչների մասնագիտական զարգացման և կրթության բովանդակության գնահատումը՝ ՀՀ հանրակրթության բարեփոխումների համատեքստում, Երևան 2013:
3. http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Naxashavix/2013(4).pdf Գիտամեթոդական հանդես, «Նախաշավիղ», Երևան, 2013:
4. http://ijevanlib.ysu.am/wp-content/uploads/2017/12/Arzumanyan.pdf Ս. Արզումանյան, Հոգեբանություն, Երևան, 2003:
5. https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908 ՀՀ հանրակրթության մասին օրենք:
6. https://vsu.am/grqer/2018/bprak/tonoyanparancem.pdf Փ. Տոնոյան, «Փոխներգործուն մեթոդների կիրառումը Փոխներգործուն մեթոդների կիրառումը տարրական դասարաններում մաթեմատիկայի տարրական դասարաններում մաթեմատիկայի ուսուցման գործընթացում»:
7. https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf Ուսուցման արդյունավետ հնարներ,Երևան: